ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Կ Ա Ր Գ Ա Դ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն
12 նոյեմբերի 2018 թվականի N 277-Ա

ԾԱՌԱՅՈՂԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Քաղաքացիական ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 22-րդ հոդվածի 1-ին մասով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2018թ. հուլիսի 19-ի N 814-Ն որոշմամբ հաստատված կարգի 2-րդ գլխի դրույթներով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և զարգացման նախարարի 2018թվականի հոկտեմբերի 29-ի N 14/77գ գրությունը և Սյունիքի մարզպետի տեղակալ Գ.Թադևոսյանի զեկուցագիրը՝

կ ա ր գ ա դ ր ում եմ.

1.Շտաբային մարզման ընթացքում ծառայողական պարտականությունների և տրված հանձնարարականների ոչ պատշաճ կատարելու, դրանց կատարման ժամկետները չպահպանելու պատճառները պարզաբանելու նպատակով ս/թ նոյեմբերի 12-ից նշանակել ծառայողական քննություն:

2. Ծառայողական քննությունն անցկացնել միանձնյա եղանակով:

3.Ծառայողական քննության վարող նշանակել մարզպետարանի գլխավոր քարտուղարի տեղակալ Գ. Թադևոսյանին:

4. Գ. Թադևոսյանին՝ սահմանված կարգով ամփոփել ծառայողական քննության արդյունքները և եզրակացությունը ներկայացնել կողմերին:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ Հ. ՊՈՂՈՍՅԱՆ

2018թ. նոյեմբերի
ք. Կապան